ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/19, 08.02.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12»

Գնման առարկան՝ ՀՀ Լոռու մարզի Տաշիրի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 04.02.2022թ.-ի նիստի թիվ 2-4 արձանագրության 1.2 կետով կայացված՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ

«Տ-Քնսթրաքշն» փակ բաժնետիրական ընկերությունից
Գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Փափազյան փողոց, շենք 8, հարկ 4
Պետական գրանցման համար՝ 273.120.908003
ՀՎՀՀ՝ 02648403

Ներկայացուցիչ՝ փաստաբան Մարիա Հրաչիկի Խաչատուրյան
(ն/ք՝ 010452548, տրված 03/08/2019 թվականին, 044-ի կողմից)
Փաստաբանական արտոնագրի համար՝ 1781
Ծանուցման հասցե՝ ՀՀ, 0012 ք. Երևան, Փափազյան 8, հարկ 4

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Հասցե, ՀՀ քաղաք Երևան, Կառավարական տուն 3

Գնման ընթացակարգի ծածկագիր, առարկա՝ ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12,
ՀՀ Լոռու մարզի Տաշիրի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքներ

ԲՈՂՈՔ

(ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի 04.02.2022 թվականի թիվ 2-4 արձանագրությունը «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասով վերացնելու պահանջի վերաբերյալ)

<u>Բողոքի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն բողոքի լուծման համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից 2021 թվականի դեկտեմբերի 07-ին ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12 ծածկագրի ներքո հայտարարվել է բաց մրցույթ ՀՀ Լոռու մարզի Տաշիրի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով (այսուհետ՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2022 թվականին կազմված թիվ 2-2 արձանագրության 1.2-րդ կետով արձանագրվել են անհամապատասխանություններ:

4.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.02.2022 թվականին կազմված 2-4 արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) 1.1-րդ կետի համաձայն՝ առանձին տողերում ներկայացված մոդելները չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

Նույն արձանագրության 1.3-րդ կետի համաձայն՝ *«Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ Կարգի 42-րդ կետի պահանջների հիման վրա «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի (...) հայտը մերժել»:*

Բողոքի հիմքերը և հիմնավորումները.

Գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի Արձանագրությունը «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասով անհիմն է և ենթակա է վերացման՝ հետևյալ պատճառաբանությամբ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝*

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):»

Նույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:*

ՀՀ կառավարության 04/05/2017 թվականի թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ *եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*

Նույն որոշման 42-րդ կետի համաձայն՝ *եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, (...):*

Վերոբերյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ներկայացված հայտում թերությունների առկայության դեպքում ընթացակարգի գնահատող հանձնաժողովը դրանց վերաբերյալ կազմում է արձանագրություն՝ ծանուցելով մասնակցին՝ վերջինիս ընձեռելով հնարավորություն սահմանված ժամկետում դրանք շտկելու:

Սույն պարագայում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2022 թվականին կազմված թիվ 2-2 արձանագրության 1.2-րդ կետով արձանագրվել են անհամապատասխանություններ, ինչի հիման վրա «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ին տրամադրվել է ժամկետ շտկումները կատարելու համար, ինչը սահմանված ժամկետում կատարվել է, սակայն գնահատող հանձնաժողովի համար շտկումները համարվել են ոչ ամբողջությամբ կատարված:

Հարկ է արձանագրել, որ բողոքաբերի կողմից կատարվել են բոլոր անհրաժեշտ շտկումները, մասնավորապես, հավելվածի շտկված տարբերակում ներկայացվել են համապատասխան սարքավորումների մոդելները: Միաժամանակ, ներկայացված մոդելները իրենց տեխնիկական բնութագրերով ունեն առավել լավ նկարագիր, քան այն, ինչ սահմանված էր հրավերով, որպիսի հանգամանքը չի կարող դիտվել որպես հրավերի պահանջներին չհամապատասխանող:

Վերոգրյալի հիման վրա՝ եզրահանգում ենք, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04/02/2022 թվականի թիվ 2-4 արձանագրությունը «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասով անհիմն է, այն ընդունվել է օրենքի խախտմամբ և ենթակա է անվավեր ճանաչման:

<u>Բողոքի պահանջը.</u>

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Գնումների» մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով՝ բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

1. Պարտավորեցնել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնելու հանձնաժողովի նիստի 04 փետրվարի 2022 թվականի թիվ 2-4 արձանագրության 1.2 կետով կայացրած որոշումը՝ «Տ-Քնսթրաքշն» փակ բաժնետիրական ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Կից ներկայացվում են

1. «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ վերաբերյալ պետական ռեգիստրից քաղվածք,
2. «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի տնօրեն Հայկ Սուքիասյանի անձնագրի պատճենը,
3. Ներկայացուցչի նույնականացման քարտի և արտոնագրի պատճենները,
4. Ներկայացուցչի լիազորությունները հավաստող լիազորագրի բնօրինակը,
5. Պետական տուրքի վճարումը հավաստող ապացույցի պատճեն,
6. Գնահատող հանձնաժողովի 31/01/2022 թվականի թիվ 2-2 արձանագրության պատճենը,
7. Գնահատող հանձնաժողովի 04/02/2022 թվականի թիվ 2-4 արձանագրության պատճենը:

«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ
ներկայացուցիչ՝ Մարիա Խաչատուրյան